



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆ

---

### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

22 նոյեմբերի 2022 թվականի

քաղ. Մինսկ

Եվրասիական տնտեսական միության դատարանի մեծ կոլեգիան հետևյալ կազմով՝

նախագահող՝ դատարանի նախագահ Է.Վ. Հայրիյան,

զեկուցող դատավոր Ա.Ա. Ֆեդորցով,

դատավորներ՝ Ա.Մ. Աժիբրաիմովա, Ժ.Ն. Բաիշեև, Դ.Գ. Կոլոս, Տ.Ն. Նեշատաևա, Վ.Խ. Սեյտիմովա, Գ.Ա. Սկրիպկինա, Ա.Է. Թումանյան, Կ.Լ. Չայկա,

դատական նիստի քարտուղար Մ.Ա. Նաումչիկ,

ուսումնասիրելով գործի նյութերը, լսելով զեկուցող դատավորին,

դեկավարվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի 46-րդ, 47-րդ, 50-րդ, 68-րդ, 69-րդ, 73-75-րդ, 96-րդ եւ 98-րդ կետերով, Եվրասիական տնտեսական միության դատարանի կանոնակարգի 72-րդ, 75-րդ եւ 85-րդ հոդվածներով,

տրամադրում է սույն խորհրդատվական եզրակացությունը՝ «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 25 հավելված) 18-րդ կետի դրույթները պարզաբանելու վերաբերյալ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի դիմումի հիման վրա:

#### I. Դիմողի հարցը

Եվրասիական տնտեսական հանձնաժողովը (այսուհետ՝ դիմող, Հանձնաժողով) դիմել է Եվրասիական տնտեսական միության դատարան (այսուհետ՝ Դատարան)՝

«Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 25 հավելված, այսուհետ համապատասխանաբար՝ Արձանագրություն, Պայմանագիր) 18-րդ կետի դրույթները պարզաբանելու վերաբերյալ դիմումով:

Դիմումի մեջ Հանձնաժողովը նշում է, որ Եվրասիական տնտեսական միության (այսուհետ՝ Միություն, ԵԱՏՄ) անդամ պետություններում գնումների իրականացման ոլորտում օրենսդրության եւ գործելակերպի վերլուծության ընթացքում հայտնաբերվել են անդամ պետությունների՝ պարտավորությունների ապահովման եղանակների (տեսակների) սահմանման հարցով տարբեր մոտեցումներ: Անդամ պետություններում բացակայում է Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններով սահմանված ապահովման եղանակները (տեսակները) ազգային օրենսդրության մեջ պարտադիր ամրագրելու վերաբերյալ միասնական կարծիքը:

Հանձնաժողովը Դատարանին խնդրում է տրամադրել խորհրդատվական եզրակացություն՝ Արձանագրության 18-րդ կետի չորրորդից յոթերորդ պարբերությունների դրույթների բովանդակության վերաբերյալ, մասնավորապես, Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններով նախատեսված՝ գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման եղանակները (տեսակները) գնումների մասին իրենց օրենսդրության մեջ ամրագրելու մասով Միության անդամ պետությունների պարտավորության առկայության առնչությամբ:

## **II. Ընթացակարգը Դատարանում**

Դատարանի մեծ կոլեգիայի՝ 2022 թվականի սեպտեմբերի 8-ի որոշմամբ Հանձնաժողովի դիմումն ընդունվել է վարույթ:

Գործը քննության համար նախապատրաստելու շրջանակներում Դատարանի կողմից հարցվել են լրացուցիչ տեղեկատվություն եւ անդամ պետությունների պետական մարմինների, կրթական եւ գիտական կազմակերպությունների՝ առաջադրված հարցերի վերաբերյալ կարծիքները, Միության իրավունքի համապատասխան վիճելի դիրքորոշումների պատրաստմանն առնչվող նյութերը:

Առաջադրված հարցերի վերաբերյալ կարծիքները եւ տեղեկատվությունն

արտահայտվել (տրամադրվել) են Հայաստանի Հանրապետության, Բելառուսի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության արդարադատության նախարարությունների, Ղազախստանի Հանրապետության օրենսդրության եւ իրավական տեղեկատվության ինստիտուտի, Ռուսաստանի Դաշնության կառավարությանն առընթեր օրենսդրության եւ համեմատական իրավագիտության ինստիտուտի, Ա.Ս. Պուշկինի անվան Ռուսաց լեզվի պետական ինստիտուտի մասնագետների կողմից:

### **III. Դատարանի եզրահանգումները**

Առաջնորդվելով Եվրասիական տնտեսական միության դատարանի ստատուտի (Պայմանագրի թիվ 2 հավելված) 50-րդ կետով՝ Դատարանի մեծ կոլեգիան արդարադատություն իրականացնելիս, այդ թվում՝ Պայմանագրի դրույթները պարզաբանելիս, կիրառում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքներն ու նորմերը, Պայմանագիրը, Միության շրջանակներում կնքված միջազգային պայմանագրերը, Միության մարմինների որոշումներն ու կարգադրությունները, միջազգային սովորույթը՝ որպես համընդհանուր գործելակերպի ապացույց, որը ճանաչված է որպես իրավական նորմ:

«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի մայիսի 23-ի Վիեննայի կոնվենցիայի 31-րդ հոդվածին համապատասխան՝ միջազգային պայմանագիրը պետք է բարեխղճորեն մեկնաբանվի պայմանագրի եզրույթների՝ դրանց համատեքստում ունեցած սովորական նշանակությանը համապատասխան, ինչպես նաեւ պայմանագրի օբյեկտի եւ նպատակների լույսի ներքո:

1. Արձանագրության 18-րդ կետի համաձայն՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման առնվազն 2 եղանակ (տեսակ) (Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերություն):

Ընդ որում, որպես գնման մասնակցության հայտի ապահովում եւ գնման պայմանագրի կատարման ապահովում, ընդունվում են, այդ թվում (Արձանագրության 18-րդ կետի հինգերորդ պարբերություն)՝

դրամական միջոցներով երաշխիքային վճարը, որը մուտքագրվում է պատվիրատուի բանկային հաշվին կամ, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ գնումների կազմակերպչի,

Էլեկտրոնային առևտրային հարթակի (Էլեկտրոնային հարթակ) օպերատորի բանկային հաշվին (Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ պարբերություն).

բանկային երաշխիքը (Արձանագրության 18-րդ կետի յոթերորդ պարբերություն):

2. Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ միջազգային պայմանագրի եզրութաբանությանը վերաբերող մասով իրավաբանական տեխնիկայի կանոնները, Պայմանագրում վարքագծի պարտադիր կանոնների ձեւակերպման փորձը թույլ են տալիս համարել, որ Արձանագրության 18-րդ կետի հինգերորդ պարբերությունում որպես ստորոգյալ գործածված «ընդունվում են» բայն արտահայտում է ընդունմանն առնչվող իրավական կարգադրությունը, որը ենթադրում է վարքագծի պարտադիր լինելը եւ հայեցողության բացակայությունը:

«Ընդունվում են» եզրույթի հետ օգտագործված «այդ թվում» բառակապակցությունը նշանակում է՝

ա) «ի թիվս այլնի, այլնի շարքում».

բ) «ներառյալ, մյուսների միջեւ»:

«Այդ թվում» կոնստրուկցիան նշանակում է տեքստում չնշված՝ այլ բաների շարքում գտնվող առարկա (երեւույթ, գործողություն եւ այլն):

«Ընդունվում են» բայը վերաբերում է «դրամական միջոցներով երաշխիքային վճար», «բանկային երաշխիք» միատեսակ հասկացություններին, որոնք կապված են «այդ թվում» կոնստրուկցիայի հետ:

Արձանագրության 18-րդ կետի հինգից յոթերորդ պարբերությունների տեքստի վերլուծությունը Դատարանի մեծ կոլեգիային հնարավորություն է տալիս եզրակացնել, որ ի թիվս գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման եղանակների (տեսակների)՝ պետք է ընդունվեն վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններում թվարկված ապահովման երկու եղանակները:

Արձանագրության 18-րդ կետի հինգից յոթերորդ պարբերությունների դրույթների նշանակության այլ մեկնաբանության (ընկալման) հետեւանքով այդ պարբերություններում շարադրված կանոնները կորցնում են իրենց իմաստը եւ օգտակար գործողությունը:

3. Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերության դրույթներին համապատասխան՝ անդամ պետությունների օրենսդրությամբ պետք է սահմանվի

գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման առնվազն 2 եղանակ (տեսակ):

Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերության դրույթներով նախատեսված է անդամ պետության կողմից իր օրենսդրության մեջ ավելի մեծ թվով ապահովման եղանակներ (տեսակներ) սահմանելու հնարավորություն:

Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերությամբ նախատեսված՝ գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման առնվազն 2 եղանակ (տեսակ) սահմանելու մասին դրույթը Պայմանագրի հրամայական պահանջ է: Տվյալ պարբերության մեջ գործածվող՝ «պետք է սահմանվի...» իրավաբանական կոնստրուկցիան նշանակում է անդամ պետությունների՝ ապահովման առնվազն 2 եղանակ (տեսակ) սահմանելու պարտավորության առկայություն:

Այսպիսով, Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերությամբ անդամ պետություններից պահանջվում է սահմանել գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման առնվազն 2 եղանակ (տեսակ), միեւնույն ժամանակ տվյալ կետի հինգից յոթերորդ պարբերությունները պարտավորեցնում են, ի թիվս ապահովման միջոցների, նախատեսել եւ ընդունել դրանցում նշված ապահովման 2 եղանակ՝

դրամական միջոցներով երաշխիքային վճար, որը մուտքագրվում է պատվիրատուի բանկային հաշվին կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ գնումների կազմակերպչի, էլեկտրոնային առևտրային հարթակի (էլեկտրոնային հարթակ) օպերատորի բանկային հաշվին,

բանկային երաշխիք:

Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերության դրույթների եւ հինգից յոթերորդ պարբերությունների դրույթների բովանդակային փոխկապակցվածությունը տեքստում արտահայտված է տվյալ կետի հինգերորդ պարբերության սկզբում՝ «ընդ որում» մակբայի միջոցով: Տվյալ արտահայտությունը նշանակում է «դրա հետ միասին, դրա հետ մեկտեղ»:

Դատարանի մեծ կոլեգիան համարում է, որ Արձանագրության 18-րդ կետի հինգերորդ պարբերությամբ նախատեսված՝ հնարավոր մատակարարից

(մատակարարից), որպես գնման մասնակցության հայտի ապահովում եւ գնման պայմանագրի կատարման ապահովում, վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններում թվարկված ապահովման երկու եղանակների ընդունման պարտավորությունն ուղեկցվում է Արձանագրության 18-րդ կետի չորրորդ պարբերության մեջ նշված՝ ապահովման առնվազ 2 եղանակ (տեսակ) օրենսդրորեն սահմանելու պարտավորությամբ:

4. Արձանագրության 18-րդ կետի վեցից յոթերորդ պարբերություններով նախատեսված՝ գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման եղանակների (տեսակների)՝ անդամ պետությունների օրենսդրության մեջ սահմանման պարտադիր լինելու վերաբերյալ Դատարանի մեծ կոլեգիայի դիրքորոշումը համապատասխանում է Պայմանագրի ինտեգրացիոն բնույթին եւ Միության հիմնական նպատակներին:

Անդամ պետությունների կողմից Արձանագրության 18-րդ կետի շրջանակներում շարադրված պարտավորությունների պահպանումն անհրաժեշտ է Միության հիմնական նպատակներին հասնելու, պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում կարգավորման սահմանված հիմքերի պահպանման, Պայմանագրով նախատեսված իրավունքների ու պարտավորությունների փոխադարձ ապահովման համար:

Պայմանագրի 1-ին հոդվածի 1-ին կետի համաձայն՝ ԵԱՏՄ-ի շրջանակներում ապահովվում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատուժի տեղաշարժի ազատությունը: Պայմանագրի 4-րդ հոդվածին համապատասխան՝ Միության հիմնական նպատակներն են՝ անդամ պետությունների տնտեսությունների կայուն զարգացման համար պայմանների ստեղծումը՝ ի նպաստ դրանց բնակչության կենսամակարդակի բարձրացման,

Միության շրջանակներում ապրանքների, ծառայությունների, կապիտալի եւ աշխատանքային ռեսուրսների միասնական շուկա ձեւավորելու ձգտումը,

համաշխարհային տնտեսության պայմաններում բազմակողմանի արդիականացումը, համագործակցությունը եւ ազգային տնտեսությունների մրցունակության բարձրացումը:

Պայմանագրի 4-րդ հոդվածում նշված՝ ԵԱՏՄ-ի շրջանակներում ապրանքների, ծառայությունների եւ կապիտալի ձեւավորման միասնական շուկայի ձեւավորման, ինչպես նաեւ համագործակցության զարգացման եւ ազգային տնտեսությունների

մրցունակության բարձրացման նպատակների իրականացմանը նպաստում են Պայմանագրի 88-րդ հոդվածում ամրագրված՝ պետական (մունիցիպալ) գնումների կարգավորման ոլորտում առկա նպատակներն ու սկզբունքները:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է անդամ պետությունների տարածքների ծագում ունեցող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների փոխադարձ հասանելիության նշանակությունը դրանց հնարավոր մատակարարների, բոլոր անդամ պետությունների մատակարարների համար՝ յուրաքանչյուր անդամ պետությունում պետական (մունիցիպալ) գնումների նպատակով՝ ԵԱՏՄ-ի չորս ազատություններն ապահովելու, Միության հիմնական նպատակներին եւ տվյալ ոլորտում կարգավորման նպատակներին հասնելու համար:

Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններով սահմանված ապահովման եղանակների (տեսակների)՝ անդամ պետությունների օրենսդրության մեջ ամրագրման պարտադիր լինելու հերքումը խախտում է անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների հիմնավոր ակնկալիքները՝ կապված պետական (մունիցիպալ) գնումների ընթացակարգերին մասնակցելու հետ՝ ելնելով ԵԱՏՄ-ի շրջանակներում բոլոր մասնակիցների համար հավասար եւ նախապես հայտնի պարտադիր պայմաններից:

5. Պայմանագրի 88-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսվում է պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում հարաբերությունների կարգավորումն անդամ պետության՝ գնումների մասնի օրենսդրությամբ եւ անդամ պետությունների միջազգային պայմանագրերով:

Դատարանի մեծ կոլեգիան նշում է, որ Միությունն իր գործունեությունն իրականացնում է միջազգային իրավունքի համընդհանուր ճանաչում ունեցող սկզբունքների հիման վրա (Պայմանագրի 3-րդ հոդված), որոնց շարքին է դասվում պետությունների կողմից ստանձնված պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Պայմանագրի 3-րդ հոդվածի յոթերորդ պարբերությանը համապատասխան՝ անդամ պետությունները բարենպաստ պայմաններ են ստեղծում Միության կողմից իր գործառույթների կատարման համար եւ ձեռնպահ են մնում այնպիսի միջոցներից, որոնք կարող են վտանգել Միության նպատակների իրագործումը, այդ թվում՝ պետական (մունիցիպալ) գնումների ոլորտում:

Պայմանագրի 88-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ անդամ պետություններում գնումներն իրականացվում են Արձանագրությանը համաձայն:

Արձանագրության 3-րդ կետի դրույթներով նախատեսվում է, որ եթե անդամ պետության օրենսդրության դրույթներից չի բխում Արձանագրությամբ սահմանվածից տարբերվող իմաստ, ապա Արձանագրությունը կիրառելիս Արձանագրության համապատասխանեցում անդամ պետության օրենսդրությանը չի պահանջվում:

Հետևաբար, այն դեպքում, երբ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված չեն Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններում նշված եղանակները՝ ի թիվս գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման եղանակների (տեսակների), ապա անհրաժեշտ է անդամ պետության օրենսդրությունը համապատասխանեցնել Միության իրավունքին:

6. Վերոնշյալի հիման վրա Դատարանի մեծ կոլեգիան հանգում է հետևյալ եզրակացությանը՝

Արձանագրության 18-րդ կետի չորրորդից յոթերորդ պարբերությունների դրույթներով նախատեսվում է Միության անդամ պետությունների պարտավորությունը՝ գնումների մասին իրենց օրենսդրության մեջ ամրագրել՝ ի թիվս գնման մասնակցության հայտի ապահովման եւ գնման պայմանագիրը կատարելու ապահովման եղանակների (տեսակների), Արձանագրության 18-րդ կետի վեցերորդ եւ յոթերորդ պարբերություններում նշված եղանակները (տեսակները)՝

դրամական միջոցներով երաշխիքային վճար, որը մուտքագրվում է պատվիրատուի բանկային հաշվին կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ գնումների կազմակերպչի, էլեկտրոնային առևտրային հարթակի (էլեկտրոնային հարթակ) օպերատորի բանկային հաշվին,

բանկային երաշխիք:

#### **IV. Եզրափակիչ դրույթներ**

Սույն խորհրդատվական եզրակացության պատճենն ուղարկել դիմողին:



Խորհրդատվական եզրակացությունը տեղադրել Դատարանի պաշտոնական ինտերնետային կայքում:

Նախագահող՝

Է.Վ. Հայրիյան

Դատավորներ՝

Ա.Մ. Աժիբրախիմովա

Ժ.Ն. Բաիշեւ

Դ.Գ. Կոլոս

Տ. Ն. Նեշատաեւա

Վ. Խ. Սեյտիմովա

Գ.Ա. Սկրիպկինա

Ա.Է. Թումանյան

Ա.Ա. Ֆեդորցով

Կ.Լ. Չայկա